

ՀԱՅ-ԿԱԹՈՒԼԻԿ ԱՌԵՋՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՂՐԻՄՈՒՄ
(XIV—XV դդ.)

Վ. Ա. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

Հայ պատմագիտության մեջ, առանց հարցի խորամուխ քննարկման, ևստաֆետային կարգով մեկը մյուսին փոխանցելով, հանիրավի օրինակա-նություն է տրվել այն թեզին, որ իբր կաթոլիկությանը հարող հայությունը կորցնում էր իր ազգային դեմքը և ի վերջո ձուլվում։ Այս մոտեցումը, որ-պես կանոն, առավել հարկավորություն էր ձեռք բերում, երբ ըստ քաղաքա-կան միտվածության ազգային պատրիոտիկ պրոպագանդը դառնում էր օրվա հրամայական պահանջ։ Ազգային կրոնի պահպանման և հայ եկեղեցու հո-վանու տակ մնալու պատմական անհրաժեշտությունն ընդգծելով հանդերձ՝ նշենք, սակայն, որ վերոհիշյալ թեզն անարդարացի է, որովհետև չի համա-պատասխանում իրականությանը։ Սկզբից ևեթ բանաձևենք այն իրողություն-նր, սր այս կամ այն քաղաքական դրդապատճառներով կաթոլիկությանը հա-րած հայությունը ոչ միայն պահպանում էր իր ազգային դեմքը, այլև ըստ էության նույնիսկ դավանափոխ չէր դառնում՝ այլևս շխտելով կրոնափո-խության մասին։ Դա էլ յուրյ տալիս կաթոլիկությանը հարած հայ նշանակալից հատվածներից մեկի՝ զրիմահայ կաթոլիկների օրինակը։ Վերջիններիս պատ-մական անցյալի, խաղաղության քարոզիչների հետ նրանց ունեցած առնչու-թյունների օրինակով փորձենք լուսաբանել հարցն ըստ էության՝ առավել կա-րևորություն ստանալով փաստերի քննարկմանը։

XII—XIII դդ. սկսած ընդհուպ մինչև XVIII դ. 70-ական թվականների վերջերս զրիմահայ գաղթախնները շարունակ դառնել են թաթարական, իսկ 1475—1783 թթ. թուրք-թաթարական տիրապետության ոլորտում։ Միաժա-մանակ 1260-ական թվականներից մինչև 1475 թ. թերակղզու հարավարևել-յան ծովափնյա շերտում հաստատված հայությունը, ասել է, թե զրիմահա-յության պատկառելի հատվածը, ենթարկվում է Զենովայի հանրապետու-թյան՝ այստեղ կառավարող գաղութային իշխանություններին, իսկ 1454 թվա-կանից՝ Զենովայի սբ. Գևորգ բանկի խնամատարներին։ Բնականաբար, այս տարածքի հայ համայնքների հասարակական, քաղաքական, տնտեսական և հոգևոր-եկեղեցական կյանքի ընթացքն իր վերելքներով ու վայրէջքներով, ներքին ինքնավարությամբ հանդերձ, ենթակա էր մահմեդական ու քրիստոն-յա կառավարիչների, ինչպես և նրանց հոգևոր սրբերի քմահաճույքներին։

Սևծովյան ավազանի բոլոր առափնյա հատվածներում սփռված մեկ տասնյակից ավելի շնչոյական գաղթականների վարչական քաղաքական ու մշակութային կենտրոնը նշանավոր Կաֆա (Թեոդոսիա) քաղաքն էր։ Սա նաև Ղրիմի ամբողջ հայության կենտրոնն էր, որը քաղաքի 70 հազարանոց բնակ-չության (XV դարում) երկու երրորդ մասն էր կազմում¹։ Ասել է, թե XV դ. քաղաքում ապրում էին 46 հազար հայեր։

Սևծովյան գաղթավայրերում իրավական, եկեղեցական և տնտեսական հարաբերությունները կարգավորելու համար Զենովայի հանրապետությունը կյանքի էր կոչել հատուկ մի վարչակարգ, որը կառավարում էր՝ ղեկավար-վելով նախ 1290 և 1316 թթ., ապա 1449 թ. Սև ծովի շենովական գաղութ-

¹ Atti della società Ligure di Storia patria (Atti), t. VIII, I, 1879, Genova, p. 345. Տե՛ս նաև Marian Malowski, Kołfa w drugiej połowie XV-ego wieku, Warszawa, 1939, p. 40.

ների կանոնադրություններով: Ըստ վերջին կանոնադրության՝ Կաֆայի և ամբողջ խազարիայի (սևծովյան մյուս զաղթականների) գլխավոր պաշտոնյան սարները և այլն:

1440 թ. կանոնադրությունը, ելնելով Զենովայի իսկ քաղաքական ու տնտեսական շահերի ապահովման խնդրից, երաշխավորում էր քրիստոնյա բնակչության նկատելի մեծամասնություն կազմող հայերի ապահովությունը՝ ունեց ներքին կյանքին, ազգային սովորույթներին և կրոնական կարգուկանոնին չմիջամտելու իմաստով: Սակայն դա չէր նշանակում, թե կանոնադրություններն արգելում էին կաթոլիկական պրոպագանդը և այդ դավանանքի տարածումը: Ժիշտ հակառակը, նրանք նեցուկ էին նրա տարածմանը, միայն թե դեմ էին բռնի մեթոդներին և հարկադրանքին, իսկ եղան ժամանակներ էլ, երբ ռազմաքաղաքական իրադրության ճնշման տակ ուղղակի դեմ դուրս եկան լատին առանձին եպիսկոպոսների նման ոտնձգություններին:

Նվ. այնուամենայնիվ, XIV դ. սկզբներից ղրիմահայոց մի մասը ընկերակց կաթոլիկ քարոզիչների ունիթոռական (միարարական) պրոպագանդի առաջ՝ ընդունելով Հռոմի պապի գերիշխանությունը, սակայն հայ եկեղեցու կարգուկանոնը, այսինքն՝ դավանանքը, ամբողջ ծեսը խստիվ պահպանելու կարևոր վերապահումով: Ղրիմում (և ոչ միայն այնտեղ, այլև բովանդակ թաթարական աշխարհում) կաթոլիկություն տարածելու ուղղությամբ Հռոմը լուրջ հույսեր էր կապում Կաֆայի (Թեոֆոսիայի) եպիսկոպոսության հետ, որը հիմնվեց 1318 թ. Իոհան XXII պապի կոնդակով: Նրա առաջին եպիսկոպոսը դարձավ Հերոնիմոսը: Հարազատ մնալով տրված առաջադրանքին՝ վերջինս իր գործունեությանը սկզբից եկեթ հաղորդեց քարոզական բնույթ: Շուտով Ղրիմում հայտնվում են նաև հայ գոմինիկյան եղբայրները, որոնք 1333 թ. Կաֆայում հիմնադրում են իրենց վանքը: Սրանց քարոզիչներից էր եպիսկոպոս Թադևոսը: Միաբանների կարգից էին նաև Ֆրա Անդրեասը, Ֆրա Հակոբը և այլք: Զենովայի հոգևոր և աշխարհիկ իշխանությունները լուրջ նեցուկ էին նաև հայ քարոզիչների համար, որոնց գործունեությունը շարունակվեց նաև XV դ. 1421 թ. Կաֆայում արտագրված ձեռագրերից մեկի գրիչն էր Ֆրա Հովասափ Ապարանցին, որը, ի դեպ, նույն ձեռագրերի հիշատակարանում չի մոռացել հիշել իր առաջին վարպետ Ֆրա Օգոստինոսին: Նույն հայ միաբաններից էր Ֆրա Թադևոսը, որը 1450 թ. Կաֆայում արտագրել էր մի «Ժամագիրք»⁴:

Ժամանակին Կաֆան դառնում է կաթոլիկության պրոպագանդի կենտրոն՝ ոչ միայն Ղրիմի, այլև Արևելքի համար: Հռոմի պապի հորդորով ու օրհնանքով Կաֆա ժամանած քարոզիչները երկու-երեք տարի այնտեղ կատարելագործվում էին արևելյան լեզուների մեջ, ապա թեև տակ Ավետարանը, իսկ ձեռքին խաչը, սև գոտով պատած սպիտակ զգեստը հագին, մեկնում էին հեռավոր մոնղոլական տարածքներ՝ խաչնարած ու քոչվոր մոնղոլ ցեղերին Քրիստոսի ուսմունքի կողմը շրջելու ծրագրով:

Ղրիմի հայ կաթոլիկների՝ Հռոմի հետ ունեցած կապերի տեսակետից կարևոր երևույթ էր Ֆլորենցիայի տիեզերաժողովին նրանց մասնակցությունը: Կաֆայի ջանքերով իշխանությունների հաշիվներով տեղի հայերի ներկայացուցիչներին 1439 թ. Ֆլորենցիայի տիեզերաժողովին մասնակից դարձնելը պիտի ամրապնդեր իրենց դիրքերը ղրիմահայության շրջանում: Նվ. այդ ուղղությամբ Կաֆայում ջանքեր ևս հյուպատոսը մեծ ջանքեր էր թափել:

² W. Heyd, Geschichte des Levantehandels in Mittelalter, Stuttgart, 1879, S. 175.

³ Ժ. Դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց Ն. Խաչիկյան, Երևան, 1950, էջ 371 և 408:

⁴ Ժ. Դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց Ն. Խաչիկյան, Երևան, 1955, էջ 649, 669—670:

..շենք, որ այդ ժամանակ Կաթայի հայոց եպիսկոպոսն էր Մաղաքիան, իսկ կաթոլիկոսապետն աթոռակալը՝ Սարգիս վարդապետը:

Կաթայում և առհասարակ Ղրիմի հարավարևելյան ծովափնյա շերտի տնտեսական կյանքում և պաշտպանության գործում հայերի ծանրակշիռ և առաջնային դերը նկատի առնելով՝ Կաթայի ջնստական հյուպատոս Պատրիմյանի արևմտյան 1433 թ. Հոռմի պապ Եվգենիոս IV-ին հորդորել էր քաղաքի հայերից առաջնիկա տիեզերածոդոսին հատուկ պատվիրակություն հրավիրելու մասին: Եվ 1433 թ. ամռանը նման առաջադրանքով պապական նվիրակներ: Ձրանչևսկո Ռոյոնայի Կրտսերը, Լյուդովիկոս վանականը և Հակոբ դը Ղրիմատրիսը ժամանում են Կաթա: Հայ երեկրիները դեռևս մինչև նվիրակներին պալը մայիսին, հյուպատոսի նախաձեռնությամբ գումարված ժողովի ժամանակ, տվել էին իրենց համաձայնությունը՝ տիեզերածոդոսին պատվիրակություն ուղարկելու վերաբերյալ, սակայն հյուպատոսից խնդրել էին երեք ամիս ժամանակ, որն անհրաժեշտ էր Սաի կաթոլիկոսի մոտ խնդրո առարկա հարցի աթիվ պատվիրակություն ուղարկելու և նրա համաձայնությունը ստանալու համար: Հյուպատոսի հրավիրած ժողովում Կաթայի հայոց ներկայությունը բացի, հայ հոգևոր առաջնորդների և հյուպատոս Պատրիմյանի միջև կնքվում է մի համաձայնագիր, որ կոչվում էր «Գիր հրամանի պատմանայ հայոց»:

Սաի հրավերի մոտ մեկնող իր պատվիրակությանը Կաթայի երեկրի հայերի և հոգևորականների 1433 թ. ժողովը, ի միջի այլոց, հանձնարարում էր նաև, որ «եթե ինքը՝ սրբազան կաթոլիկոսը, մերժե իրենց խնդրածը զերկել կամ թույլ տալ, և եթե հիշյալ պատգամավորն (պատվիրակությունը՝ Վ. Մ.) երեք ամիս մեջ չվերադառնա սրբազան կաթոլիկոսին, այն ատեն հանձն կառնեն, կը պարտավորին և կը համանին, առյ՛ չն պարագային հակառակ՝ դուրս առ ամենասուրբ տերն մեր քահանայապետ կամ ի ճննովա և կամ առ այլուհեղոսն, ինչպես որ պատշաճ կերևա հիշյալ հյուպատոսին, պարագայետ մը ընդարձակ իշխանությամբ, լայն և ընդհանրապես խոստամամբ (լիազորություններով՝ Վ. Մ.)... և հիմիկվանե կընտրեն և ընտրած նկատել կուզեն նույն վարդապետը իբրև իրավունք ունեցող երեք ամսեն ետև իրենց պատգամավորության և դեսպանության ի վերոգրյալ գործ՝ լի և ընդհանուր գործակալությամբ՝ ըստ վերոգրելոյն»:

Ինքնին բացատրելի էր, թե ինչու Ղրիմահայոց առաջնորդները, իրենց լուսավորչական եպիսկոպոս Մաղաքիայի գլխավորությամբ, այդքան կարևորություն էին տալիս տիեզերածոդոսին և պատրաստ էին մասնակցելու նրան՝ անգամ կաթոլիկոսի բացասական դիրքորոշման պարագայում: Թուրք-թաթարական վերահաս ագրեսիան նրանցից պահանջում էր կառել նաև Հոռմի, իսկ նրա միջոցով՝ համայն Արևմուտքի օգնության հույսից: Այդ շրջանում նշված վտանգը օրըստօրե սպառնալից բնույթ էր ընդունում Ղրիմի հարավարևելյան ծովափի քրիստոնյա բնակչության համար: Հենց դա էր պատճառը, որ 1433 թ. մայիսի 12-ին Կաթայում կայացած ժողովին մասնակցում էին թե՛ լուսավորչական և թե՛ հայ-կաթոլիկ համայնքների ներկայացուցիչները:

Ղրիմահայ պատվիրակները նախ դասեց են Կ. Պոլիս և ապա այնտեղից, Հովհաննես եպիսկոպոսի գլխավորությամբ, մեկնում Կիլիկիա: Սաի կաթոլիկոս Կոստանդինը, չնայած հայ հոգևորականության մի մասի գիմադրուշթյանը, համաձայնվում է առաջիկա տիեզերածոդոսին ուղարկել պատվիրակ-

5 Հանդես ամսօրյա, 1935, № 1, 2, էջ 37:

6 Ա. վրդ. Պալեան, Պատմութիւն կաթոլիկ վարդապետութեան ի հայս և միութիւն նոցա ընդ հռովմեական եկեղեցւոց ի Ֆլորենտեան սինոդոսի, Վիեննա, 1878, էջ 300:

7 Հանդես ամսօրյա, 1911, № 6—8, էջ 460—462, Վ. Ա. Միքայելյան, Հայ-իտալական առնչություններ, ջննովական փաստաթղթերը Ղրիմահայերի մասին, Երևան, 1974, էջ 33—34:

8 Հանդես ամսօրյա, 1935, № 1—2, էջ 37:

կություն: Բերայի Հովակիմ եպիսկոպոսը, Կաֆայի աթոռակալ Սարգիս վարդապետը, ինչպես նաև Սարգիս և Բովակ... վարդապետները, որպես կաթողիկոսական պատվիրակներ, պետք է մասնակցեին տիեզերածղովին իրենց ձեռքին ունենալով կաթողիկոսի տված պատգամավորական թուղթը⁹:

Սաի հայոց կաթողիկոս Կոստանդինը կարծում էր, որ քրիստոնյաները պետք է միավորվեն, միություն կազմեն, որ, հստակ մեջ նշանակում հռոմեական ազգային դավանանքից. այդ ահտը ավելի շուտ քաղաքական միություն ունենալու 1438 թ. հուլիսին Կաֆայի հոգևոր դասին և ազնվականությանն ուղղված իր գրության մեջ նա ուղղակի գրում էր, թե պարտ և պատշաճ է քրիստոնեից ի միութեան և ի միաբանութեան կհալն¹⁰:

Կոստանդին կաթողիկոսի համաձայնությունը ամենևին չպիտի աղերսել կաթողիկական պրոպագանդի ազդեցությանը: Որոշ դեր կարող էին խաղալ ուն Կաֆայից նրա մոտ ժամանած պատվիրակները, որոնք, արտահայտելով օննովացիներին համահավասար իրավունքների ձգտող Կաֆայի հայ վերնախավի շահերը, ինչպես նաև տազնապը թուրք-թաթարական ազդեցության հանդեպ, անշուշտ, խնդիր ունեին ցանկացած գնով ձեռք բերել կաթողիկոսի համաձայնությունը: Գլխավորը, սակայն, դա չէր, այլ այն, որ կաթողիկոսը պատվիրակություն ուղարկելուն համաձայնվում էր բոլոր քրիստոնյաների միասնության և դաշինքի քաղաքական խնդրից ելնելով: Այդ միավորման «պարտ և պատշաճությունը» թելադրվում էր քրիստոնյա ժողովուրդների գլխին կախված թուրքական վտանգով այն պահից, երբ թուրքերը արդեն վաղուց մտել էին Բալկաններ և ծովից ու ցամաքից սկսել էին բախել Կ. Պոլսի դռները: Ուրեմն, Ֆլորենցիայի տիեզերածղովին հայոց պատվիրակության մասնակցությունը պիտի բացատրել թուրքական վտանգի դեմն առնելու ընդհանուր մտայնությամբ, ասել է թե քրիստոնյա աշխարհի քաղաքական մտահոգություններին արձագանքելու հանգամանքով:

Հայոց պատվիրակությունը, Սարգիս վարդապետի գլխավորությամբ Սսից վերադարձավ և Կաֆայից Ֆլորենցիա հասավ միայն 1439 թ. հուլիսին, երբ տիեզերածղովն ավարտված էր: Բայց քանի որ տիեզերածղովի պատվիրակները տակավին Ֆլորենցիայում էին, Եվգենիոս IV պապը հատուկ նիստեր գումարեց, որոնք զբաղվեցին հայոց և Հռոմի միության հարցերով: Նույնամբերին կնքվում է դաշինքը, որը հայերի կողմից ստորագրում են Սարգիս և Թովմա վարդապետները: Միաժամանակ ունկնդրելով հայ պատվիրակների բողոքին՝ պապը հատուկ կոնդակ է իջեցնում Կաֆայի լատին եպիսկոպոսի անունով, որով նրան կարգադրում էր վերջ տալ կաթողիկոսությանը հարած հայերի ազդային-եկեղեցական արարողություններին միջամտելուն¹¹:

Հիշյալ դաշինքը ամենևին չէր նշանակում դավանափոխություն, մանավանդ, որ Ֆլորենցիայի տիեզերածղովը առհասարակ նման նպատակներ չէր էլ հետապնդում: Նշենք, որ տիեզերածղովին մասնակցում էին նաև հունական, ռուսական և քրիստոնյա այլ եկեղեցիների ներկայացուցիչները:

Հայերի և հույների՝ Ֆլորենցիայի եկեղեցածղովին մասնակցելը իրականում կապված էր թուրքերի դեմ Արևմուտքի օգնությունը ապահովելու հույների հետ¹²: Եկեղեցիների միության գաղափարին, սակայն, հայ և հույն ժողովրդական զանգվածները դիմադիր կանգնեցին, և այն նրանց շրջանում լայն ժողովրդականությանը չգտավ: Պատճառը, հավանաբար, ոչ այնքան հռոմեական միսիոներների անդադրում քարոզչական գործունեությունն էր, որքան հիասթափությունը Արևմուտքից ակնկալվելիք օգնության նկատմամբ: Ահա թե ինչու հայ մի շարք նշանավոր հոգևորականներ, որոնց թվում Ամի-

9 Ա. Պալենան, նշվ. աշխ., էջ 87:

10 Հանդես մասուրյա, 1935, № 1—2, էջ 38:

11 Ա. վրդ. Պալենան, նշվ. աշխ., էջ 39:

12 Ա. շ. Հովհաննիսյան, Դավաճանք հայ ազատագրական մտքի պատմության, գիրք 2, Երևան, 1959. է. 8:

չի կախկոպուս Մկրտիչ Նաղաշը, վճռապես դեմ էին Ֆլորենցիայի տիեզերա-
սողովոյն պատվիրակութիւնն ուղարկելուն¹³։ Կարօում եսք, քաղաքական
առումով յարաւոյ լիարժեքութիւնը պետք է ճիշտ շէր, քանի որ
նրանք տեսնողութեամբ էրն աւակալութիւնական ազատական մղումների ձայնիս,
աւանանկով քրիստոսյա եկեղեցիների միութեան դադարաւորը, որ, ինչպէս
քանիցս շշտողս, խելագրութեամբ էր թուրքերի առաջնադասաս հարկադրան-
քով։

XV դարում կաթոլիկ քարոզիչները մշտապես ու համառ ջանքեր էին
թափում կաթոլիկութեանը համաձայնութիւն տալու ղրիմահայոց մեջ այդ
դաշնայնաբար ասարակութիւնը համար։ Նադիրն այն է, որ քաղաքական ու տն-
տեսական հաշիւների համեմատ ճանաչելով Հոռմի պապի դերակալութիւնը
և փաստորեն այսպէսով միայն իրենց անվանելով հայ-կաթոլիկներ, ղրիմա-
հայ և առհասարակ հայ-կաթոլիկները մնացյալ ամեն ինչում՝ լեզու, եկե-
ղեցական ծեսեր, մշակութիւն, սովորութիւններ և այլն, իրենց համարում էին
թուրք հայեր։ Իսկ շատ լավ գիտեին Հոռմի քարոզիչները, և այդ դիտակցու-
թեամբ էլ նրանց պրոպագանդը ըստ մեծի մասին նրբիս էր՝ հայերի աղգա-
լին-կրօնական ծեսերի ու սովորութիւնների հաշիւառմամբ։ 1446 թ. նոր նշա-
նակում ստացած կաթոլիկ առաջնորդին Կաֆա ճանապարհելուց առաջ Եվդե-
նիոս IV պապը նրան խորհուրդ էր տալիս զոռնաւոր լինել ղրիմահայ կա-
թոլիկների հետ, որոնք ցանկացած պահի կարող են հրաժարվել նոր դա-
վառանքից։ «Ամենից ավելի քեզ է հայտնի,—ասում էր պապը,—թե որ-
պիսի աշխատութիւն թափեցինք մենք կաթոլիկութիւնը ընդունած հայերին
իրենց հավատի մեջ պահելու համար, որին կարողացանք հասնել ծախքերի
գնով... չպիտք է մոռանալ, որ քեզ Հովիվ ենք նշանակել միայն նրա համար,
որ խոսքով ու դործով մեծ արդունք ցույց տաս Կաֆային, մի քաղաքի, որ
բոլոր քաղաքներից դրա կարիքն ավելի է զգում»¹⁴։

Եվդենիոս պապի այս հանձնարարական-նամակը թույլ է տալիս անե-
լու առնվազն հետևյալ երեք հետևությունները.

ա. Հոռմից մեծ ջանքեր էր խել ղրիմահայերից հետևորդների հավաքա-
ւորումը։

բ. Դրանի նա հասել էր նաև «ծախքերի գնով», որ կարելի է հասկանալ
նաև ուղղակի՝ առանձին մեծամեծ հայերի կաշառելու իմաստով։

դ. Կաֆայի լատին եպիսկոպոսից պահանջվում էր «խոսքով ու գրքով»
ամեն ինչի դիմել քաղաքի հայ-կաթոլիկներին այդ հավատքում պահելու հա-
մար. ուրեմն՝ տեղի կաթոլիկ հայութեան մեջ նրա հիմքերը շատ երերուն էին
և այդ առումով նման աշխատանքի կարիքը այնտեղ բոլոր քաղաքներից
ավելի էր զգացվում։

Հայերի ընդդիմադիր վերաբերմունքը հարկադրում էր Հոռմի քարոզիչ-
ներին՝ իրենց դործունեութեան մեջ ավելի շատ տեղ հատկացնել նրանց նյու-
թապէս շահագրգռելու, շոյելու և համոզելու մեթոդներին։ «Անհրաժեշտ է
խիստ ուշադիր և բարեկամ լինել հայոց կաթողիկոսի, վարդապետների և
քահանաների հետ»,—կարդում ենք քարոզիչներին հղված մեկ այլ հրահան-
գում,—որովհետև տեսնելով բարեկամութիւնը իրենց հոգևոր առաջնորդների
հետ, հայերը առանց կասկածի և վստահութեամբ կլսեն միսիոներների քա-
րոզները։ Որովհետև հայերը շատ են կապված իրենց սովորութիւններին և ծե-
սերին, կաթոլիկ կրօնի հաջողութեան համար պետք է բավականաւոր միայն
նրանով, որ հայերը ընդունեն (իմա ճանաչեն—Վ. Մ.) նոստալիան եկեղեցու
դաւանանք, իսկ հայ եկեղեցական ծեսերն ու ավանդութիւնները պետք է
քողեն անվար (ընդգծումը մերն է—Վ. Մ.)։ Եվ, վերջապէս, հայերից շա-
տերը չդիտեն, թե ի՞նչ բան է հերձվածը։ Միսիոներների ճարակութիւնը նրա
համար է, որ նրանք կաթոլիկ դարձնեն, առանց որ նրանք նկատեն իրենց
հերձվածող կամ հերետիկոս լինելը»¹⁵։

¹³ Ա. վրդ. Պալեան, նշվ. աշխ., էջ 87։

¹⁴ Atti, t. VII, II, p. 697, Վ. Միքայելյան, նշվ. աշխ., էջ 35։

¹⁵ Հայրենիք, 1933, № 4, էջ 114։

էր կատարել անսովոր արարողություններ, հայերին համարում էր հերետիկոսներ, առաջարկում էր ընդունել կաթոլիկություն: Կաֆայի ջենովական վարչությունը և նրա դյուխն կանգնած հյուպատոսը, նկատի ունենալով սրա այսօրինակ գործակերպի վտանգավոր և անգամ կործանարար հետևանքները քաղաքի հասար, արգելում են նրան միջամտելու հայերի գործերին: Ի պատասխան դրա, եպիսկոպոսը բողոք-բողոքի հետևից դիմում էր Ջենովա, սր. Դեորգ բանկի վարչությանը և նրա կառավարիչներին համարելով կաշառակերներ, որոնք, իբր, անընդունակ են կառավարելու գաղութը: Հանդիպելով հյուպատոսներ Վիվալդիի և ապա Դոմոկուտայի վճռական դիմագրություններ, Կասպորին 1455 թ. հուլիսի 8-ին սր. Դեորգ բանկի վարչությանը բողոքով առկեսում և ի նամակ է ուղարկում, սպառնալով նաև թե «հրաժեշտ է տալիս թեմին և Ջենովա է մեկնում գործի բացատրության համար»¹⁸։ Դրան հաջորդում է հյուպատոս Դոմոկուտայի հիմնավոր բողոքը Բանկի վարչությանը Կասպորիի գործունեությունը հարուցել էր հասարակական հուզումներ հայերի և հույների շրջանում, հանգամանք, որը ստիպել էր հյուպատոսին և իր օգնական մասարներին դիմադրել կանգնելու սեփական եպիսկոպոսի նկրտումներին: Իրավացի էր հյուպատոս Դոմոկուտային Ջենովա հղած իր այն բաժանում, թե հոգևոր հովիվը պարտավոր է համարվելու այն միջավայրին, որտեղ նա գտնվում է, ուստի՝ «մեր եպիսկոպոսը շտեմ է մոռանա, որ մենք այստեղ ապրում ենք ոչ թե կաթոլիկական երեքում, այլ թաթարական ցեղերի մեջ»²⁰։

Ջենովայից եկած վարչապետին մտահոգում էին ոչ այնքան ծագած հուզումներն ու դժգոհությունները ըստ էության, որքան դրանցով պայմանավորված վտանգավոր կացության ստեղծումը ոչ իտալացի քրիստոնյա բնակչության շրջանում՝ թաթարական ցեղերով շրջապատված միջավայրում: Հանգամանք, որն ինքնին խոսում է քաղաքի պաշտպանության գործում նրա բնակչության մեծամասնությունը կազմող հայերի վճռական դերի մասին: 1455 թ. սեպտեմբերի 6-ին հյուպատոսն ու մասարները սր. Դեորգ բանկի վարչությանը ուղարկած համատեղ բողոքում Կաֆայի անվտանգությունը շահերից ելնելով, պահանջում էին հոգևոր այդ պետին հեռացնել քաղաքից՝ հայերի նկատմամբ նրա վարած քաղաքականությունն իրավացիորեն համարելով անթույլատրելի: «Դուք գիտեք, — դրում էին նրանք, — որ այս երկիրը զբաղվածապես բնակեցված է հայերով (ընդգծումը — Վ. Մ.), որոնք մեր ճանաչված հենարանն են ու լավագույն վաճառականները և քաղաքին մեծ եկամուտ են բերում: Իսկ նա (եպիսկոպոս Զիակոմո Կասպորին — Վ. Մ.) ամեն օր հետապնդում է նրանց և [հնարում է] նրանց համար նորամուծություններ, որոնց նրանք անսովոր են: Այդպես նա վարվում է նաև մյուս ազգությունների հետ: Այդ բանը մենք ոչ մի դեպքում չենք կարող թույլ տալ»²¹։

Մի անգամ ևս նշենք, որ նման ձևով գործող եպիսկոպոսները հազվադեպ էին, քանի որ, թե պապի և թե աշխարհիկ առաջնորդների ցուցումները գերազանցապես առավելությունը տալիս էին համոզման մեթոդներին: Կասպորիի նման մի եպիսկոպոսի Կաֆայում հանդիպում ենք մի փոքր ավելի ուշ՝ 1460-ական թվականների կեսին, երբ նրա գործունեությունը առիթ տվեց տեղական դժգոհությունների հայության շրջանում՝ առաջ բերելով սուր բախում նրա և ջենովական աշխարհիկ իշխանությունների միջև: Մի անգամ ևս նշենք, որ Կաֆայի հյուպատոսները և մյուս պաշտոնյաներն աշխատում էին ամեն ինչով խրախուսել հայերին, հիշեցնել նրանց օգտակար գործերն ի շահ Կաֆայի: 1464 թ. հունվարի 31-ի նամակում՝ ուղղված Կաֆայի հայ

¹⁸ Н. Н. Мурзакевич, Четыре года г. Каффы (ЗООИД, т. VIII, 1872, с. 129.

¹⁹ Նույն տեղում:

²⁰ Л. П. Колли, Каффа в период владения ею банком св. Георгия, Симферополь, 1911, с. 15.

²¹ Atti, t. VII, I, էջ 364—365, Վ. Միքայելյան, հղվ. աղյուս., էջ 80—81:

եպիսկոպոսին, սբ. Գևորգ բանկի կառավարիչները, ի միջի այլոց, գրում էին. «Որքան մենք ուշադրություն ենք դարձնում Ձեր առաքինության ու մտաբերում ենք Ձեր բարի գործերը՝ կատարված հանուն այս սքանչելի քամարոբույնում ենք Ձեր բարոյության և մեծության, հատկապես պարիսպների շինարարության ղաթի բարոյության և մեծության, համոզվում, որ Դուք ցանկանում եք մեր իշխանության հարատևությունը և ունեք լավագույն հույսեր, որ կտեսնենք համընդհանուր գոհունակություն ու բերկրանք»²²։

Հայերին շոյելու և նրանց համակրանքը նվաճելու իմաստով վերին աստիճանի հետաքրքիր է նաև նույն սբ. Գևորգ բանկի խնամատարների՝ հայ եպիսկոպոսի անունով իջեցված 1465 թ. հուլիսի 25-ի նամակը։ Այն գրվել է Կաֆայի ջենովական կառավարիչների խորհրդով՝ որպես վերին պաշտոնյաների կողմից հայերին ուղղված սիրաշահող մի ուղեգր։ Ահա մի քաղվածք այդ ուղեգրից. «Ձեր առաքինությունը, հարգարժան հայր եպիսկոպոս, Ձեր բարեպաշտությունը և ճշտաստությունը և արագ գործակերպը այս քաղաքին, միաժամանակ ձեր քաղաքի բարոյության ամրապնդման և պարենավորման համար մեզ հայտնի են հյուպատոսի և բառարարների կողմից Ձեզ տրված զոհանքները։ ...Ձեզ հարգելով և հուսադրում ենք, որ քաղաքի ոչ միայն հարատևեք Ձեր կատարած լավ գործերում, այլև Ձեր քանքերը ավելացնեք այս քաղաքի բարոյության համար, հանուն որի Դուք առավել շահով կշահվեք և կապալանեք։ ... Երբեք Ձեզ տեղեկություն ենք, որ Ձեր բարոյությունը և լավ համբավին վերաբերող որևէ հարցում քաղաքացիականություն ենք և սիրով կաշենք այն, ինչ Ձեզ հաճելի կլինի և սիրահոգար կերպով կընդունենք այն, ինչ արժանի կհամարենք մեզ հանձնելու դրանք»²³։

Որքան թուրք-թաթարական վտանգը իրական կերպարանք էր ընդունում, այնքան Կաֆայի ջենովացի կառավարիչներն ավելի «հայասեր» էին դառնում և քանում էին ինչ գնով էլ լինի շեղոցացունել դադարադադար և անուղղիչ առանձին եպիսկոպոսների վնասաբեր քայլերը։ 1460-ական թվականների կեսին, օրինակ, նրանք վճռականորեն զիջադրեցին Կաֆայի լատին եպիսկոպոս Պանիսարիի ոտնձգություններին տեղացի հայերի դեմ։ Գործին միջամտում են սբ. Գևորգ բանկի խնամատարները, որոնք 1467 թ. հունվարի 15-ին իշխեցած գրությամբ ստատում են Պանիսարիին՝ քաղաքի արևելյան քրիստոնյաների եկեղեցական գործերին միջամտելու համար։ Այդ փաստաթուղթը ուշադրավ է շատ կողմերով, ուստի տեղին է գրեթե ամբողջությամբ այն մեջբերել. «Ոչ առանց զարմանքի իմացանք, ի Զրիստոս հարգարժան հայր, որ Ձեր հայրապետությունը փարձել է միջամտել ինչ-որ ամուսնական գործի, որն առում են, թե կայացել է մի ոմն քաղաքացու (Թուրքենցեսի) Դե Ֆադիոյի և մի հույն աղջկա միջև, որի եղբայր և աղբակալները տեղյակ չեն եղել և չեն մասնակցել այդ գործին։ Այս իրողությունը մենք ընդունեցինք զգուշությամբ, հատկապես այն պատճառով, որ ոչ միայն Կաֆայի օրենքներով է Ձեզ արգելվում որևէ բան անել կամ կարգադրել այս քաղաքում բնակվող հայերին, հույներին կամ այլ հերետիկոսներին կամ աղանդավորներին վերաբերող ամուսնական նույնանման գործերում, այլ նաև նրանով, որ Ձեր այստեղից մեկնելու ժամանակ մեր նախորդները Ձեզանից խնդրել են և Ձեզ պատվիրել, որպեսզի Դուք նման ամուսնական գործերին չմիջամտեք։ Ինչպես հայտնի է Ձեր շրջահայեցությանը, տեղի են ունեցել ոչ միայն վերը նշված Դե Ֆադիոյի գործը, այլև այլ սկանդալներ, այնքան վտանգավոր, որ, ըստ մեզ, եթե անհրաժեշտ միջոցներ ձեռնարկեն մեր աշխարհիկ պաշտոնյաների կողմից, դրանք պատճառ կդառնալին այս քաղաքի և մեր այլ տիրույթների կործանմանը։ Աստված մի արասցե։ Հետևաբար Ձեզ կոչ ենք անում, խնդրում ենք և ինչքան իրավասու ենք, պարտավորեցնում ենք Ձեր հայրապետությունը, որ վերը նշված գործերին չմիջամտեք ոչ մի ձևով, ինչպես այդ մասին կարգադրված է Կաֆայի օրենքներով և ինչպես դա հարմար է մեր պատվին և այս քաղաքի բարոյությանը»²⁴։

²² Atti, t. VII, I, էջ 277—278 և 81—82։

²³ Նույն տեղում. հ. II, I, էջ 347—348։

²⁴ Atti, հ. VII, I, էջ 468—469, Վ. Ա. Միքայելյան, նշվ. աղյուս., էջ 86։

Ամենահիմնական հետևությունը, որ բխում է սույն փաստաթղթից, դա այն է, որ Կաֆայի արևելյան քրիստոնյաների և առաջին հերթին հայերի գործերին միջամտելն ու խառնվելը, եթե չկանխվեին, կարող էին հասցնել քաղաքի կոյրծանմանը: Դա նշանակում է, որ վճռական խոսքը քաղաքի պաշտպանության գործում, ջնհովական բարձրաստիճան պաշտոնեության իսկ խոստովանությամբ, պատկանում էր տեղացիներին: Մյուս կողմից, պիտի ընդունել նաև այն իրողությունը, որ նույնիսկ կաթոլիկությանը համաձայնություն տված հայերը ամենաանշան միջամտության դեպքում ցույց էին տալիս լուրջագույն անհնազանդություն:

Ղրիմահայության մի մասի կողմից կաթոլիկության ընդունումը այնպիսին չէր, որ բավարարեր հոռմեական եկեղեցուն²⁵, բայց վերջինս այլ և չէր ընդունել, եթե չէր ուզում առհասարակ զրկվել նրանցից: Խնդիրն այն է, և ուսիթը ծագած դեպքում հայերը հրաժարվում էին «նոր դավանանքից», այլ քայլը նրանց համար դժվար չէր կատարել, քանի որ հայ կաթոլիկների մոտ, ինչպես նշեցինք, ազգային եկեղեցական ծեսը պահպանվում էր:

Քրիստոնյա եկեղեցիների միությունը ցեմենտելու փորձ արած Ֆլորենցիայի աիեղերաժողովից հետո էլ հայ կաթոլիկները շարունակում էին պահպանել իրենց ազգային-կրոնական ինքնությունը և հակահարված տալ լատին առանձին եպիսկոպոսների ամենափոքր իսկ փորձերին՝ միջամտելու իրենց ազգային գործերին: Որքանով ջնհովացիների դիրքերը Ղրիմում թուլանում էին, այնքանով կաթոլիկական պրոպագանդը այնտեղ կորցնում էր իր ոտքի տակի հողը: 1475 թ. թուրքական ներխուժման պատճառով Ղրիմում ջնհովական գաղթավայրերի վերացումը հղավ կաթոլիկության կարապիկը թերակղզու վրա: Կաֆայի և նրան մոտակա ջնհովական ծովափնյա շերտի՝ այս կամ այն չափով կաթոլիկությանը մերձեցած հայերն էլ հեշտությամբ հեռացան նրանից²⁶, Եվ պատահական չէր, որ XVII դարի տաղասաց վարդան Կաֆայեցին գահունակությամբ շեշտում էր Կաֆայի հայության համատարած լուսավորչական լինելու փաստը:

Աստուած քաղցրացու Կաֆա երկրի,
Իւր ժողովրդեանն սբ. Լուսավորչի.
Միաբան եկեալ մեծէ ի փոքրի,
Եվ զարդարեցին տաճար գովելի²⁷:

Նույնն է հետևում նաև XVII դարի Ղրիմահայ կյանքին քաջատեղյակ հուշատուր Կաֆայեցու (Խաչդուզի) տարեգրությունից: 1656 թ. էջմիածնից Ղրիմ եկած նվիրակ Դավիթ վարդապետի մասին նա գրում է. «Դավիթ վարդապետն ներկրակ եկաւ մեզի էջմիածնէն, նորընծայ տէր Յակոբ կաթողիկոսէն, լուսաբուզ մեռնաւն»²⁸: Ղրիմահայոց անունից Խաչդուզը վարդապետի բերած մեռնը համարում է «լուսաբուզ», որը ընդհանուր ենթատեքստում հավաստում է Ղրիմահայոց ազգային դավանանքին մնալու իրողությունը:

Եվ, այնուամենայնիվ, եթե XVIII—XIX դարերում ևս Ղրիմահայության մեջ կային ոչ մեծ թվով հայ կաթոլիկներ, տպա նրանք ոչ թե XIV—XV դարերի Ղրիմահայ կաթոլիկների հաջորդական ժառանգներն էին, այլ ավելի ուշ շրջանում այլ վայրերից, այդ թվում նաև Լեհաստանից և բուն Հայաստանից Ղրիմ եկած, մասամբ էլ XVII դարում Զանիբեկ-Գիրեյ խանի թույլտվությամբ մզված կաթոլիկ պրոպագանդին տեղի տված հայ ընտանիքներն էին:

Սակայն ամփոփելով կրկին նշենք, որ թե Ղրիմում և թե այլուր այս կամ այն քաղաքական ու տնտեսական դրդապատճառներով կաթոլիկությանը

²⁵ Г. Айвазовский, Заметки о происхождении новороссийских армян (ЗООИД, т. VI, 1867, с. 550—551).

²⁶ Նույն տեղում:

²⁷ Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. № 3504, ք. 228:

²⁸ Մամր ժամանակագրություններ, կաշմեց Վ. Հակոբյան, հ. 1, Երևան, 1951, էջ 227:

հարած հայերը, ճանաչելով Հռոմի պապի գերակայությունը, որպես հոգևոր պետի, ըստ էության չէին հեռանում ազգային-եկեղեցական ծեսից և արարողություններից, և պատահական չէ, որ ի տարբերություն մյուս կաթոլիկ ազգերի (ֆրանսիացիներ, լեհեր, իսպանացիներ և այլն) կրում էին հայ-կաթոլիկ անվանումը, որ նշանակում էր ոչ այլ ինչ, քան ազգապաակամեղիություն: XIV—XV դդ. հայ կաթոլիկ գրիչները Ղրիմում արտագրում են կրոնական, փիլիսոփայական և այլ բնույթի մի շարք ձեռագրեր, ստեղծում հայերեն ինքնուրույն գործեր, որոնք հաստատում են վերը մեր նշած դրույթի իրողությունը, այն է՝ կաթոլիկ դավանանքին հարելը ամենևին չէր նշանակում հայ ազգային ինքնության կորուստ:

АРМЯНО-КАТОЛИЧЕСКИЕ ОТНОШЕНИЯ В КРЫМУ (XIV—XV вв.)

В. А. МИКАЕЛЯН

Резюме

В армянской историографии бытует мнение, что, приняв католичество, армяне неизбежно теряли свое национальное лицо и в конечном итоге ассимилировались. Освещение исторических фактов показывает, что подобная точка зрения не имеет ничего общего с действительным положением вещей. Пример крымских армян-католиков, который был общим для всех армян-католиков, показывает, что принятие армянами католичества, в основном, ограничивалось признанием ими лишь верховенства римского папы, а во всем остальном они сохраняли национальные признаки: язык, обряды, богослужение, даже догму армянской церкви.